



**«Էյչ-Էս-Բի-Սի» բանկի
ապրանքների մատակարարների
և ծառայությունների
մատուցողների համար Էթիկայի և
բնապահպանական վարքագծի
կանոններ**

**HSBC
Ethical and
Environmental Code of
Conduct for Suppliers
of Goods and
Services**

Ամսաթիվը՝ 2020թ. Օգոստոսի 1
Վերջնական տարբերակ 10.0

Date: 1 August 2020
Final Version 10.0

Բովանդակություն

Բաժին 1. Ներածություն	3
1.1 Շրջանակը	3
1.2 Քաղաքականությունը	3
Բաժին 2. Պահանջները	4
2.1 Տնտեսական ոլորտ	4
2.2 Բնապահպանական ոլորտ	5
2.3 Սոցիալական ոլորտ	6
Բաժին 3. Կառավարման համակարգ	8
Բաժին 4. Համապատասխանությունը	9

Table of contents

Section 1: Introduction	3
1.1 Scope	3
1.2 Policy	3
Section 2: Requirements	4
2.1 Economic	4
2.2 Environmental	5
2.3 Social	6
Section 3: Management System	8
Section 4: Compliance	9

Բաժին 1. Ներածություն

«Էյչ-Էս-Բի-Սի» բանկն աշխարհի խոշորագույն ընկերություններից մեկն է բանկային և ֆինանսական ծառայությունների ոլորտում: «Էյչ-Էս-Բի-Սի»-ն պարտավորվում է ապահովել իր մատակարարների շղթայի պատասխանատու գործունեությունը և աշխատակիցների կյանքի, համայնքների և միջավայրի բարելավումը: «Էյչ-Էս-Բի-Սի»-ն որպես առաջնահերթություն է դիտարկում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում դրական ազդեցություն ունենալը: Ընկերությունն առաջնորդվում է Մարդու իրավունքների միջազգային օրինաշարով, ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և Աշխատանքի միջազգային կազմակերպության հռչակագրում ամրագրված՝ աշխատանքի ոլորտում հիմնարար սկզբունքներով և իրավունքներով: «Էյչ-Էս-Բի-Սի»-ն կա՛մ հանդիսանում է ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի, Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ ուղեցույցների, Սալիվանի գլոբալ սկզբունքների, Պատասխանատու ներդրման և Կայուն զարգացման ապահովման ՄԱԿ-ի սկզբունքների կողմ կա՛մ հրապարակայնորեն իր համաձայնությունն է հայտնում դրանց:

«Էյչ-Էս-Բի-Սի»-ն կարող է պարբերաբար վերանայել սույն կանոնները, անհրաժեշտության դեպքում՝ կարող է կատարել փոփոխություններ և ակնկալել դրանց ընդունումը մատակարարների կողմից:

Շրջանակը

«Էյչ-Էս-Բի-Սի»-ի բոլոր մատակարարները պետք է հետևեն «Էյչ-Էս-Բի-Սի»-ի Ապրանքների մատակարարների և ծառայությունների մատուցողների համար նախատեսված Էթիկայի և բնապահպանական վարքագծի կանոններին: Սա վերաբերում է նաև այն մատակարարներին, որոնք՝

ծառայություններ են մատուցում «Էյչ-Էս-Բի-Սի»-ին կամ «Էյչ-Էս-Բի-Սի»-ի անունից,

հանդիսանում են մատակարարի կողմից որպես ենթակապալառու ներգրավված երրորդ կողմ:

Քաղաքականությունը

«Էյչ-Էս-Բի-Սի»-ն սույն Վարքագծի կանոնները մշակել է բոլոր մատակարարների, ինչպես նաև մատակարարների կողմից որպես ենթակապալառու ներգրավված յուրաքանչյուր երրորդ կողմի համար: Սույն կանոնները կիրառվում են «Էյչ-Էս-Բի-Սի»-ի աշխատակիցների, ինչպես նաև վերջինիս հետ աշխատող ընկերությունների կամ «Էյչ-Էս-Բի-Սի»-ի անունից աշխատող որևէ անհատի կողմից ներգրավված բոլոր մատակարարների նկատմամբ: «Էյչ-Էս-Բի-Սի»-ի հետ որևէ առևտրային

Section 1: Introduction

HSBC is one of the largest banking and financial services organisations in the world. HSBC has a responsibility to ensure its supply chain operates responsibly and improves the lives of workers, their communities and the environment. HSBC is committed to making a positive contribution to human rights. We are guided by the International Bill of Human Rights, the UN Universal Declaration of Human Rights and the principles set out in the International Labour Organization’s Declaration on Fundamental Principles and Rights at Work. HSBC is a signatory or has publicly expressed support for to the UN Global Compact, the OECD Guidelines for Multinational Enterprises, the Global Sullivan Principles, the UN Principles for Responsible Investment and the UN Principles for Sustainable Insurance.

HSBC will periodically review this Code and make revisions when needed, which we will expect suppliers to adopt.

1.1 Scope

All HSBC suppliers must comply with the HSBC Ethical and Environmental Code of Conduct for Suppliers of Goods and Services. This includes suppliers that are:

- Providing services to or on behalf of HSBC
- Third parties sub-contracted by a supplier

Policy

HSBC has developed this Code for all suppliers and any third parties sub-contracted by suppliers. It is applicable to all suppliers appointed by any HSBC Function, Business or individual working on behalf of HSBC. Any supplier that has any commercial dealings with HSBC, and any of their subcontractors, must state compliance with this Code.

հարաբերության մեջ գտնվող յուրաքանչյուր մատակարար և մատակարարի յուրաքանչյուր ենթակապալառու պետք է հետևեն սույն կանոններին:

Ընկերության մշտական նպատակն է մատակարարների շղթայի գործընկերների հետ աշխատել համագործակցային հիմունքներով՝ հանուն կայուն զարգացման: Այն դեպքերում, երբ պարզվում է, որ մատակարարը կամ նրա ենթակապալառուներից մեկը չի հետևում սույն կանոններին, «Էյչ-Էս-Բի-Սի»-ն կարող է մատակարարի հետ մշակել աշխատանքի բարելավմանն ուղղված ծրագրեր: Եթե մատակարարը շարունակում է չհետևել սույն կանոններին, ապա «Էյչ-Էս-Բի-Սի»-ն կարող է քայլեր ձեռնարկել՝ պայմանագրի պայմանները վերանայելու, այդ թվում՝ պատվերները կրճատելու և աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու ուղղությամբ:

Սույն Վարքագծի կանոնները բաղկացած են չորս բաժնից: Բաժին 1-ում և 2-ում համապատասխանաբար նկարագրվում են տնտեսական, բնապահպանական և սոցիալական ոլորտների չափորոշիչները: Բաժին 3-ում և 4-ում նկարագրվում են արդյունավետ և խելամիտ կառավարման ու ղեկավարման պահանջները՝ սույն կանոնները կատարելու նպատակով:

Բաժին 2. Պահանջները

2.1 Տնտեսական ոլորտ

Տնտեսական կայունությունը միտված է աշխատակիցների, ներդրողների և ընկերության գործունեության իրականացման տարածքի համայնքների համար տնտեսական օգուտներ ապահովելուն: Էթիկայի տեսանկյունից առևտրային գործարքները պետք է տնտեսապես շահավետ լինեն ներգրավված բոլոր կողմերի համար, իսկ հարաբերությունները պետք է հիմնված լինեն արդար և ազնիվ գործարքների սկզբունքի ապահովման վրա՝ դրանով իսկ նպաստելով արդար և կայուն զարգացմանը: Տնտեսական ոլորտում բոլոր մատակարարները՝

1. Գործարար վարքագծի նորմերում կամ համանման քաղաքականության մեջ պետք է հիմնականում ներդնեն այնպիսի գործարար սկզբունքներ, այդ թվում հարցեր, ինչպիսիք են՝ ներպետական օրենքներին և կանոնակարգերին խստորեն հետևելը,
2. պետք է ապահովեն այնպիսի քաղաքականություն, որը կկանխարգելի խարդախության, փողերի լվացման, կաշառակերության և կոռուպցիայի դեպքերը, ինչպես նաև ձեռնպահ մնան «Էյչ-Էս-Բի-Սի»-ի աշխատակիցներին նվերներ կամ հյուրասիրություն առաջարկելուց,
3. պետք է հետևեն պատժամիջոցների կիրառման ազգային և միջազգային քաղաքականությանը և օրենսդրությանը.

At all times, our goal is to work collaboratively with our supply chain partners on sustainability. In those cases where a supplier or one of its subcontractors is found to not be in compliance with this Code, HSBC will work with the supplier on an improvement plan. If the supplier continues to be not in compliance with this Code, HSBC will take steps to review the terms of the contract, including reduction in the order and exiting of the relationship.

This Code of Conduct is made up of four sections. Sections 1 and 2 outline standards for Economic, Environmental and Social, respectively. Sections 3 and 4 outline the requirements of having a reasonable governance and management structure to ensure compliance with this Code.

Section 2: Requirements

2.1 Economic

Economic sustainability focuses upon bringing economic benefit to the workers, investors and communities in which a company operates. From an ethical perspective, commercial transactions should be economically beneficial to all parties involved and relationships should be based on the principle of fair and honest dealings, whilst promoting fair and sustainable development:

1. Suppliers must embed basic business principles in a Code of Business Standards or a similar policy, including such items as adherence to local laws and regulations
2. Suppliers must ensure that policies are in place to stop fraud, money laundering, bribery and corruption and refrain from offering gifts and entertainment to HSBC employees
3. All suppliers must comply with national and international sanctions policy and legislation

4. պետք է մշակեն վճարման խելամիտ և իրավաչափ քաղաքականություն՝ իրենց մատակարարների և ենթակապալառուների հետ աշխատանքում,
5. պետք է հաշվի առնեն Շրջանաձև տնտեսության, ծառայությունների մատուցման ամբողջ ծավալի և ժամկետների ընթացքում արված ծախսերի, ինչպես նաև դրանց վերլուծության հարցերը՝ աշխատանքների հետագա նախագծման, արտադրության կազմակերպման և կառավարման ոլորտում:

4. Suppliers must have reasonable and lawful payment policies with their own suppliers and subcontractors
5. Suppliers must consider the principles of the Circular Economy, Whole Life Costing and Life Cycle Analysis in design, manufacture and recycling/disposal

Բնապահպանական ոլորտ

Ընդունելով, որ կայուն բիզնեսը պետք է արժևորի երկրագնդի սահմանափակ քանակությամբ միջոցները, «Էյչ-Էս-Բի-Սի» ընկերությունն ակնկալում է, որ իր մատակարարները աջակցում են շրջակա միջավայրի կառավարման կոշտ սկզբունքների իրականացմանը և կրճատում են շրջակա միջավայրին իրենց կողմից հասցված ազդեցությունը, ինչպես նաև աջակցում են կայուն տեխնոլոգիաների զարգացմանը: Բնապահպանական ոլորտում բոլոր մատակարարները՝

պետք է ունենան իրենց գործունեության չափին և բնույթին համապատասխան բնապահպանական/կայունության քաղաքականության փաստաթուղթ, որը կանխարգելում է իրենց գործունեության, այդ թվում՝ հումքի կիրառման, ջերմոցային գազերի արտանետումների, ջրի աղտոտման, թափոնների հետևանքով օդի որակին և կենսաբազմազանությանը, շրջակա միջավայրին ու մարդկանց առողջությանը հասցվելիք լուրջ հետևանքները, ինչպես նաև նշում են վերջիններիս մեղմացման, նվազագույնի հասցնելու և վերահսկելու ուղիները,

պետք է ունենան ներքին բնապահպանական կառավարման արդյունավետ ծրագիր/համակարգ և բավարար չափով պատրաստված անձնակազմ, որը պատասխանատու է կազմակերպության բնապահպանական գործունեության կառավարման համար, ինչպես նաև առանցքային բնապահպանական ցուցանիշների մասին տվյալները պետք է հասանելի լինեն ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ դրանից դուրս,

պետք է ենթարկվեն շրջակա միջավայրի պաշտպանության և վտանգավոր ու վնասակար նյութերով գործունեությունը կարգավորող բոլոր գործող օրենքներին և կանոնակարգերին,

եթե պահում է որևէ վտանգավոր և/կամ դյուրավառ նյութեր նրանք պետք է մինիմիզացնի դրանց օգտագործումը, պահպանի ապահովությամբ և վարի վտանգավոր նյութերի հաշվառում, որոնք անհրաժեշտ են

եթե մատակարարն ունի արտադրական հզորություններ ապա նա պարտավոր է ապահովել, որ յուրաքանչյուր արտադրամաս խստորեն հետևի բնապահպանության վերաբերյալ առկա օրենքներին, այդ թվում՝ թափոնների կառավարման, օդի

Environmental

Recognising that sustainable businesses should acknowledge the planet’s finite resources, HSBC expects its suppliers to support sound environmental management principles and reduce their impact on the environment within which they operate. In addition, HSBC’s suppliers are expected to support the development of sustainable technologies:

Suppliers must have a written environmental/sustainability policy appropriate to the size and nature of the supplier’s operations that, where applicable, addresses preventing, mitigating and controlling serious environmental and health impacts from operations including raw material usage, greenhouse gas emissions, water, waste, air quality and biodiversity

Suppliers must have an effective internal environmental management programme/system with adequately trained staff responsible for managing the organisations environmental performance and communicate data on key environmental indicators internally and externally

Suppliers must abide by all applicable legislation and regulations related to the protection of the environment and the handling of dangerous and hazardous materials

If suppliers keep any dangerous and/or hazardous materials they must minimise use, store safely and keep all hazardous material records that are necessary

If suppliers have manufacturing facilities they must ensure the facility complies with environmental laws, including all laws related to waste disposal, air emissions, discharges, toxic substances and hazardous waste disposal

Suppliers of goods or materials must validate that all input materials and components were obtained from permissible sources consistent with international treaties and protocols in addition to local laws and regulations

արտանետումների, թունավոր նյութերի և վտանգավոր թափոնների կառավարմանը վերաբերող բոլոր կանոնակարգերին,

ապրանքների և ծառայությունների մատակարարները պետք է հավաստիացնեն, որ բոլոր հումքանյութերը և բաղադրիչները ձեռք են բերվել թույլատրելի աղբյուրներից՝ ներպետական օրենքներից և կանոնակարգերից բացի նաև միջազգային պայմանագրերին և արձանագրություններին համապատասխան:

Մոցիալական ոլորտ

Բիզնեսի և մարդու իրավունքների մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներով սահմանվում է, որ բոլոր մասնավոր ձեռնարկատիրություններն ունեն միևնույն պատասխանատվությունը մարդու իրավունքների պահպանման ոլորտում: «Էյչ-Էս-Բի-Սի»-ն պատրաստակամ է բարելավելու մարդու իրավունքները: «Էյչ-Էս-Բի-Սի»-ն ակնկալում է, որ մատակարարները պետք է հարգեն աշխատակիցների իրավունքները և կատարեն բոլոր այն երկրներում և համայնքներում գործող օրենքների, կանոնակարգերի ու հրահանգների պահանջները, որտեղ իրենք գործունեություն են իրականացնում:

Աշխատանքային ոլորտ

Մատակարարները՝

1. պետք է արգելեն ստրկատիրության յուրաքանչյուր դրսևորում, ինչպես նաև հարկադիր ու պարտադրված աշխատանքի կիրառումը ու թե՛ տեղացի և թե՛ օտարերկրյա աշխատակիցների համար ապահովեն նրանց ընտրությամբ աշխատանքից հեռանալու իրավունք և հնարավորություն,
2. պետք է բացառեն երեխաների կամ անչափահասների աշխատուժի օգտագործումը, իսկ երիտասարդ աշխատակիցների աշխատանքը պետք է համապատասխանի Աշխատանքի կազմակերպության չափանիշներին, Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ ուղեցույցների և ներպետական կանոնակարգերի պահանջներին,
3. պետք է ապահովեն, որ աշխատավարձերը համապատասխանեն օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձին և ոլորտի չափանիշներին՝ առանց որևէ ոչ իրավաչափ մասհանումների,
4. պետք է ապահովեն, որ աշխատաժամերը համապատասխանեն ներպետական կանոնակարգերին և տվյալ ոլորտում առկա փորձին, իսկ ինքնակամ արտաժամյա աշխատանքը լինի թույլատրելի սահմաններում,

Social

The UN Guiding Principles on Business and Human Rights, state that all private enterprises hold an equal responsibility to respect human rights. HSBC is committed to improving human rights. HSBC expects suppliers to respect the human rights of their employees and to comply with all relevant legislation, regulations and directives in the countries and communities in which they operate:

Labour

1. Suppliers must prohibit the use of all types of slavery and forced and bonded labour and give workers, whether local or migrant, the right and the ability to leave employment when they choose
2. Suppliers must ensure that child and underage labour is not used and that the employment of young workers adheres to International Labour Organisation standards, the OECD Guidelines for Multinational Enterprises and local regulations
3. Suppliers must ensure that wages meet legally mandated minimums and industry standards without unauthorised deductions
4. Suppliers must ensure that working hours are in accordance with local regulation and industry practice and voluntary overtime is at manageable levels

5. պետք է խտրական վերաբերմունք չդրստորեն կրոնի, սոցիալական, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման կամ էթնիկ պատկանելության և ազգային օրենսդրությամբ ընդունված այլ նմանատիպ հիմքերով որևէ խմբի կամ մարդու իրավունքների միջազգային չափանիշներով պաշտպանված որևէ դասի նկատմամբ,
6. պետք է չխոչընդոտեն օրինական եղանակով միավորումներ, ինչպես օրինակ՝ արհեստակցական միություններ, ստեղծելու կամ դրանց միանալու աշխատակիցների իրավունքի իրացմանը,
7. պետք է ապահովեն հստակ և համընդհանուր կիրառելի կարգապահական գործելակերպ և բողոքների ներկայացման ընթացակարգեր, որոնք ներառում են հոգեկան, ֆիզիկական կամ բանավոր վիրավորանքներն արգելող դրույթներ:

5. Suppliers must not discriminate against any group on religious, social, gender identity, sexual orientation or ethnic grounds or any protected classes covered under international human rights standards and such other ground as may be recognized under national law

6. Suppliers must not hinder the right of workers to legally organise and join associations such as labour unions

7. Suppliers must provide clear and uniformly applied disciplinary practices and grievance procedures that include provisions prohibiting mental, physical or verbal abuse

Առողջության և անվտանգության ոլորտ

Մատակարարները՝

պետք է ապահովեն անվտանգ աշխատանքային միջավայր՝ պահպանելով ներպետական օրենքների և կանոնակարգերի պահանջները,

պետք է ապահովեն առողջության և անվտանգության արդյունավետ կառավարումը, որպեսզի վերհսկվեն և հասցեագրվեն առողջության և անվտանգության հետ կապված ռիսկերը, խնդիրները, միջադեպերը և խախտումները՝ դրանով ապահովելով աշխատուժի առողջությունն ու բարեկեցությունը:

Health and Safety

Suppliers must provide a safe work environment, abiding by local laws and regulations

Suppliers must ensure health and safety is effectively managed, so that health and safety risks, issues, incidents and non-compliance are identified and addressed in order to provide adequate facilities to ensure the health and well-being of its workforce

Էթիկայի ոլորտ

Մատակարարները՝

պետք է որդեգրեն ազնիվ առևտրի և էթիկայի կանոններին համապատասխան մատակարարների ընտրության գործելակերպ՝ տրամադրված ապրանքի կամ ծառայության մասով,

պետք է հարգեն այն մարդկանց և համայնքների իրավունքները, որտեղ գործունեություն են իրականացնում, ինչպես նաև պետք է ձգտեն բարելավել այդ մարդկանց և համայնքների կյանքի որակը,

պետք է ներգրավված չլինեն մարդկանց առքուվաճառքի՝ թրաֆիկինգի գործընթացներում, ինչպես նաև չաջակցեն դրանց,

պետք է ներկայացնեն ապացույցներ այն մասին, որ իրենք իրականացրել են իրավիճակի համալիր գնահատման ընթացակարգեր իրենց մատակարարների շղթայում էթիկայի հարցերը կարգավորելու, ներառյալ՝ աշխատանքի հետ կապված

Ethics

Suppliers must support fair-trade and ethical sourcing practices relevant to the commodity or service provided

Suppliers must respect the human rights of the people and communities in which they operate and should strive to improve the lives of the people and communities in which they operate

Suppliers must not engage in or support trafficking in human beings

բոլոր գործընթացներն ապահովելու համար՝ այս ոլորտում գործող օրենքների պահանջները կատարելու նպատակով,

պետք է հավաստիացնեն, որ բացի «Հավասարության մասին» 2010թ . ՄԹ օրենքից, իրենք և իրենց ենթակապալառուները և ծառայություն մատուցողները , ունեն լուրջ ընթացակարգեր՝ սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց հասանելի ապրանքների, ծառայությունների կամ հնարավորությունների տրամադրումն ապահովելու համար:

Մատակարարները պետք է՝

պարտավորվեն վերացնել աշխատանքային խոչընդոտները սահմանափակ կարողություններով մարդկանց համար,

տրամադրեն ապրանքներ և ծառայություններ, որոնք հասանելի են սահմանափակ կարողություններով մարդկանց,

վերանայեն իրենց ապրանքներն ու ծառայությունները՝ ներգրավելով սահմանափակ կարողություններով մարդկանց,

հայտնեն իրենց պատրաստակամությունը՝ սահմանափակ կարողություններով մարդկանց խնդիրների լուծման հարցում նաև կազմակերպությունից դուրս:

Բաժին 3. Կառավարման համակարգ

Այն մատակարարները, որոնց հետ «Էյչ-Էս-Բի-Մի»-ն գտնվում է կանոնավոր և շարունակական գործարքային հարաբերություններում, պետք է ունենան գործող արդյունավետ կառավարման և ղեկավարման գործընթացներ՝ ապահովելու սույն կանոններին ենթարկվելու գործընթացը: Ավելին, մատակարարները պետք է ողջամտության սահմաններում ջանքեր գործադրեն հավաստիացնելու, որ իրենք ծանոթ են սույն կանոններին, դրանց նպատակներին և հետևում են դրանց:

Մատակարարները պետք է հավաստիացնեն, որ իրենց գործող համակարգերն ու ընթացակարգերը բավարար են «Էյչ-Էս-Բի-Մի»-ի ապրանքանիշին և համբավին սպառնացող որևէ հնարավոր բացասական ազդեցություն մեղմելու համար:

«Էյչ-Էս-Բի-Մի»-ն իրեն իրավունք է վերապահում պատահականության սկզբունքով ստուգելու մատակարարի՝ սույն կանոնների պահանջների կատարմանն ուղղված քաղաքականությունը կամը, ընթացակարգերը շարադրող յուրաքանչյուր այլ փաստաթուղթ: Որոշ դեպքերում «Էյչ-Էս-Բի-Մի»-ն կարող է պահանջել մատակարարի՝ սույն կանոնների հետ համապատասխանության առցանց կամ տեղում իրականացվող աուդիտ:

Suppliers must provide evidence that they have implemented due diligence procedures to manage ethical issues within their supply chain, including all labour-related processes to ensure they comply with laws on slavery and human trafficking

In addition to the requirements of the UK Equality Act 2010, HSBC's general principles are that suppliers and their supply chain, contractors and service providers must ensure that they have robust procedures to ensure that they provide disability accessible products, services and opportunities. Suppliers should:

commit to removing employment barriers for disabled people

provide products and services that are accessible
review their products and services with the involvement of disabled people

promote their commitment to disability issues externally

Section 3: Management System

Suppliers with whom HSBC has regular and recurring dealings should have good management and governance processes in place to ensure compliance with this Code. Furthermore, suppliers must make reasonable efforts to monitor their supply chain, ensuring their suppliers are aware of, and compliant with, the aims of the Code. Suppliers must ensure that their systems and procedures are sufficient to mitigate any potential negative impact on HSBC's brand and reputation.

HSBC reserves the right to randomly review the supplier's policies, procedures or any other document related to adherence to this Code. In some cases, HSBC may require an on-line or on-site audit of a supplier's adherence to this Code.

Բաժին 4. Համապատասխանությունը

«Էյչ-Էս-Բի-Սի»-ն մատակարարներից պահանջում է ստորագրել սույն կանոնները և դրանով իսկ ընդունել առկա պահանջները: «Էյչ-Էս-Բի-Սի»-ն մատակարարներից պահանջում է կատարել սույն կանոնների պահանջները և կարողանան ցույց տալ «Էյչ-Էս-Բի-Սի»-ին, թե ինչպես են ապահովվելու դրանց կատարումը:

«Էյչ-Էս-Բի-Սի»-ն իրականացնում է թափանցիկ քաղաքականություն մատակարարների հետ հարաբերություններում և պատրաստ է համատեղ աշխատելու մատակարարների հետ՝ ապահովելու կանոնների պահպանումը և անհրաժեշտության դեպքում, մշակելու աշխատանքի բարելավմանն ուղղված ծրագրեր:

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ կանոններին և ընդունում եմ դրանցում առկա պահանջները:

Ընկերությունը՝

Company:

Անվանումը՝

Print name:

Ստորագրված

Signed:

Ամսաթիվը՝

Date:

Section 4: Compliance

HSBC requires suppliers to sign this code, thereby acknowledging the requirements contained within. HSBC requires suppliers to agree to adhere to these requirements and to be able to demonstrate to HSBC how these requirements are being met.

HSBC operates a policy of transparency with suppliers and will work collectively with suppliers ensure adherence to the Code and develop improvement programmes if required.

I confirm that I have read the Code and acknowledge the requirements contained within.